ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 8 » հոկտեմբերի 2024 թվականի N: 476 - Ա ք. Գյումրի

ԱԼԵՔՍԱՆ ԱՅՎԱԶՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 2.2-րդ կետի, 6-րդ կետի, նույն որոշմամբ սահմանված N 5 հավելվածի 44-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Ալեքսան Այվազյանի 2024 թվականի հոկտեմբերի 7-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ալեքսան Այվազյանին տրամադրել 2 օր չվճարվող արձակուրդ՝ 2024 թվականի հոկտեմբերի 10-ից 11-ը ներառյալ:

2. Ալեքսան Այվազյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N 4 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող նշանակել նույն կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ Ռուզաննա Նիկոլյանին:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է